# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 5

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Ոստան համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը /գոտևորման նախագիծը/ հաստատելու մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

2. Ոստան համայնքի սեփականությունը հանդիսացող հողատարածքներից վարձակալության տրամադրելու մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

3. Ոստան համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդ-վաճառք կազմակերպելու և մեկնարկային գինը սահմանելու մասին:

/Զեկ.՝ Հ. Խաչատրյան/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 6

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ /ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ/ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի $14_{3}$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Ոստան համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը /գոտևորման նախագիծը/ համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի $14_{3}$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի ,,Հողերի օգտագործման սխեման /հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան/,, գծագրին /այսուհետ՝ Գծագիր/ և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Ոստան համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները

| Հողամասի համարը գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը /հա/ | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը /հա/ |
|---|---|---|---|---|
| | | Առաջնահերթ միջոցառումներ /1-5 տարի/ | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադր. նշ. հողեր | |
| ԳԱ-1 | Վարելահող | 0,26 | Արդյունաբերության | 0,26 |
| ԳԱ-2 | Պտղատու այգի | 0,17 | Արդյունաբերության | 0,17 |
| ԳԱ-3 | Վարելահող | 0,49 | Արդյունաբերության | 0,49 |
| ԳԱ-4 | Այլ հողատեսքեր | 0,41 | Արդյունաբերության | 0,41 |
| ԳԱ-5 | Այլ հողատեսքեր | 0,203 | Արդյունաբերության | 0,203 |
| | Ընդհանուր | 1,53 | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| ԲԱ-1 | Բնակելի կառուցապատման /տնամերձ կառուցապատում/ | 0,22 | Արդյունաբերության | 0,22 |
| | Ընդհանուր | 0,22 | | |
| | | | Հատուկ պահպանվող հողեր | |
| ԲՀ-1 | Բնակելի կառուցապատման /տնամերձ կառուցապատում/ | 0,07 | Պատմության և մշակույթի | 0,07 |
| | Ընդհանուր | 0,07 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Հատուկ պահպանվող հողերից | | | |
| | | | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթ. հողերից՝ | |
| ՀԷ-1 | Պատմության և մշակույթի | 4,7 | Կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/ | 4,7 |
| | Ընդհանուր | | 4,7 | |
| Ընդամենը առաջնաժամկետ | | 6,52 | | |
| | Միջնաժամկետ միջոցառումներ /5-10 տարի/ | | | |
| | Հեռանկարային միջոցառումներ /10-15 տարի/ | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի հողեր | |
| ԲԲ-2 | Այլ հողեր | 0,17 | Ընդհանուր օգտագործման կանաչ գոտի | 0,17 |
| ԲԲ-3 | Այլ հողեր | 0,4 | Ընդհանուր օգտագործման կանաչ գոտի | 0,4 |
| ԲԲ-4 | Այլ հողեր | 0,33 | Ընդհանուր օգտագործման կանաչ գոտի | 0,33 |
| | Ընդհանուր | | 0,90 | |
| | Ընդամենը հեռանկար | | 0,90 | |
| | Ընդհանուր | | 8,27 | |

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և ,,Քաղաքաշինության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14₃ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

5. Ուժը կորցրած համարել համայնքի ավագանու 14.05.2020թ. թիվ 12 որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 7

### ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. 2021 թվականի մայիսի 07-ին Ոստանի համայնքապետարանում անցկացնել համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասի աճուրդ-վաճառք՝

ծածկագիր՝ 03-077-0104-0024, 0,1662 հա գյուղ. նշ. խաղող, գյուղ.գործ.ծավ.նպ.

ծածկագիր՝ 03-077-0104-0024, 0,0594 հա գյուղ. նշ. պտուղ հնդավոր, գյուղ.գործ.ծավ.նպ.

2. Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 8

## ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավար մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Վարձակալության տրամադրել Ոստան համայնքի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողատարածքները՝ կառուցապատման իրավունքով.

ծածկագիր ՝ 03-077-1100-0015, 0,0346 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից

ծածկագիր՝ 03-077-1100-0007-ից 0,11214 հա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից

2. Կառուցապատման իրավունքով վարձակալությամբ տրամադրվող հողամասերի վարձակալության մեկնարկային գինը սահմանել հողի հարկի դրույքաչափին հավասար: Վարձակալության ժամկետը սահմանել 99 տարի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԱՐՇԱԿՅԱՆ ԳԵՂԱՄ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**